

Անի Ս. Հակոբյան

ԱՎԵՏԻՍ ԱՀԱՐՈՆՅԱՆԻ «ՆԱԶԵԻ ՕՐՈՐԸ» ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԱՐՎԵՍՏՈՒՄ*

Բանալի բառեր – Նազեի օրոր, ժողովրդական երգարվեստ, ավանդական, Ավետիս Ահարոնյան, տարբերակ, բանասաց, երաժշտություն, բանահյուսություն, քաղաքային, գեղջկական:

Մուտք

Հայտնի է, որ հայ ավանդական երաժշտությունն ունի երեք հիմնական ճյուղ՝ գեղջկական, քաղաքային ֆոլկլոր և գուսանական-աշուղական արվեստ¹: Նշված ճյուղերը, լինելով հայ ժողովրդի ստեղծագործության արգասիք, միևնույն ժամանակ միմյանցից տարբերվում են իրենց ավանդականության աստիճանով, մեղեդու ծավալման տրամաբանությամբ, ձայնակարգային հենքով, մտածողությամբ և այլ ցուցիչներով:

Հայտնի է նաև, որ հայ երաժշտական ֆոլկլորագիտության հիմնադիր Կոմիտասն իբրև «դասական», բուն, անխառն ճյուղ ուսումնասիրել և մեծավ մասամբ զբաղվել է գեղջկական երաժշտությամբ: Նա ասում էր. «Քաղաքացի հայերը ժողովրդական երգերին տալիս են «գիւղական, գեղջկական, շինական եւ ռամկական» անուններ եւ շատ իրաւացի, որովհետեւ երգ ստեղծողը, խաղ կապողը գիւղացին է. երգաստեղծութեան մէջ բաժին ունի իւրաքանչիւր գեղջուկ»², և ավելացնում. «Երգաստեղծութեան շնորհը գեղջուկի համար մի բնատուր պարգեւ է. ամէնքն էլ, լաւ կամ վատ, խաղ կապել եւ երգել գիտեն: Նա սովորում է երգաստեղծութեան արուեստը հէնց բնութեան գրկում, որ նորա անդաւաճան դայրոցն է»³:

* Հոդվածն ընդունվել է տպագրության 20.12.2020:

1 Վերջինս համարվում է ժողովրդա-մասնագիտացված մշակույթ:

2 **Կոմիտաս**, Հայ գեղջուկ երաժշտություն, «Գրական նշխարք Կոմիտաս վարդապետի բեղուն գրչին», Աշխատասիրություն՝ Գր. Աբել վրդ. Օղլուգեանի, Մոնթրեալ, 1994, էջ 147:

3 Նույն տեղում, էջ 146-147:

Բանն այն է, որ քաղաքները, կառուցվելով քաղաքակրթական խաչմերուկներում, իբրև առևտրային, տնտեսական կենտրոններ, ժողովրդագրական առումով եղել են ավելի «խայտաբղետ», բազմազգ, ինչն էլ ենթադրել է կենցաղի ու մշակույթի համապատասխան նկարագիր: Այդ վայրերում բնակվողները, պահպանելով գենետիկորեն ժառանգածը, նաև փոխառել, կրել են ազդեցություններ իրենց կողքին ապրող մյուս ազգերից: Հայ իրականության մեջ ավելի ուշ շրջանում դրան է գումարվել նաև քաղաքներում եվրոպական երաժշտական մշակույթի գերիշխող ազդեցությունը: Ուստի, երբ 19-րդ դարավերջին և 20-րդ դարասկզբին նվիրյալ անհատների ջանքերով նախաձեռնվեցին մեր ազգագրական ժառանգության, այդ թվում՝ երաժշտական նյութի գրանցումն ու հետազոտությունը, շատերի հայացքն ուղղվեց դեպի անխառն կենցաղով ու մշակույթով ապրող հայկական գյուղերը:

Կրելով հնագույն շերտերից եկող ավանդականությունը՝ գեղջկական երգերը առավելագույնս արտացոլում են ժողովրդի կյանքն ու կենցաղը, բարքերն ու սովորույթները, նիստուկացը, այսինքն՝ տեսակը:

Գեղջկական երաժշտական արվեստն իր հերթին բաժանվում է ժանրերի⁴: Ժանր ասելով պետք է նկատի ունենալ երգի կերպարային, լեզվական ու ոճական առանձնահատկությունները, զարգացման օրինաչափությունները, թեմատիկան ու գործառույթը⁵: Բայց, որոշելով ուսումնասիրել բացառապես գեղջկական ծագման, այսինքն՝ վառ ավանդականությամբ աչքի ընկնող օրորները, մենք ժամանակին «անտեսել» էինք չափազանց սիրված ու տարածված, սակայն հեղինակային տեքստով ու ակնհայտ քաղաքային մտածողությամբ հորինված «Նազեի օրորը» երգը⁶:

1. Ավետիս Ահարոնյանի «Նազեի օրորը»⁷

2020 թվականին ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտը նախաձեռնել էր վաստակաշատ երաժշտագետ Քրիստափոր Քուչնարյանի 130-ամյա հոբելյանին նվիրված գիտաժողով, որին մասնակցելու առիթով ուսումնասիրեցինք 1927–1929 թվականներին ձայնագրված ու, փաստորեն, ամենավաղ հնչող նյութը համարվող՝ Քուչնարյանի ֆոնդի⁸ արխիվային, անտիպ նմուշները: Դրանց մեջ հայտնաբերեցինք Ավետիս Ահարոնյանի «Արցունքի հովիտը» արձակ դրամայի միակ չափածո հատվածը՝ Նազե անունով այրի կնոջ օրորոցայինը՝

4 Հայ ֆոլկլորագիտության մեջ ժանրային առաջին դասակարգումը՝ ըստ Կոմիտասի հողվածների, կատարել է Ռոբերտ Աթայանը: Տե՛ս Կոմիտաս, Երկերի ժողովածու, հատ. IX, Եր., 1999, էջ 165-166:

5 Տե՛ս Բրուսյան Մ., Հայ ժողովրդական երաժշտական ստեղծագործություն, Եր., 2004, էջ 99:

6 Տե՛ս <https://www.youtube.com/watch?v=11HVeibc6wU> (մուտք՝ 15.10.2020):

7 Ավետիս Ահարոնյանը «Նազեի օրորը» վերնագրով առանձին ստեղծագործություն չունի, սակայն մասնավոր ու հատկապես ժողովրդի մեջ նրա «Արցունքի հովիտը» արձակ դրամայի չափածո հատվածը հայտնի է հենց այս վերտառությամբ:

8 Ֆոնդը գտնվում է ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ժողովրդական երաժշտության բաժնին կից Արամ Քոչարյանի անվան ձայնարարանում:

քաղաքային երաժշտության հորինվածքի հետ որևէ աղերս չունեցող «Քարավանն անցավ»⁹ սկզբնատողով օրորոցային երգի տեսքով: Դիպվածով բացահայտված անուշն առիթ եղավ խորամուխ լինելու և պարզելու, թե Ա. Ահարոնյանի բանաստեղծությունը կոնկրետ երբ և ինչ հանգամանքներում է հորինվել, ինչ ստեղծագործության մաս է կազմել, քանի որ, ինչպես հայտնի է, Ա. Ահարոնյանը հիմնականում արձակ, ոչ չափածո ձևերով է ստեղծագործել: Սրանց հաջորդեցին մյուս տրամաբանական հարցերը. ինչո՞ւ հենց **Նազեի օրոր**, չէ՞ որ բանաստեղծական և ոչ մի տան մեջ այդ հատուկ անվան հիշատակումը չկա, բանաստեղծությունը հեղինակայի՞ն է, թե՞ գուցե այն, հեղինակի կողմից մեկից գրառվելով Նազե անունով իբրև բանահյուսական նյութ, մշակվել է որպես գրական ստեղծագործություն, բայց ժողովրդի կողմից սիրվել և քաղաքային միջավայրում երաժշտականացվել է միջավայրին համապատասխան մեղեդիով...

Ստորև ամբողջությամբ կներկայացնենք Ա. Ահարոնյանի «Արցունքի հովիտը»¹⁰ արձակ դրամայի միակ չափածո հատվածը՝ դրամայում Նազե անունով ըմբոստ, պայքարող այրի կնոջը մարմնավորող կերպարի օրորոցայինը.

**Քնիր, իմ բալիկ, օրոր, իշ արա,
Դու լաց մի լինիր, ես շատ եմ լացել,
Կոյր կռունկները սուգ ու շիւանով,
Մեր սեւ երկնքով եկան անց կացան,
Այս, մեր լեռներում նրանք կուրացան,
Դու լաց մի՛ լինիր, ես շատ եմ լացել:**

**Հողմն է հեծեծում սեւ անտառներում,
Անտեր մեռելի սուգն է այն, բալիկ,
Անտեր ու անթաղ մեռելները շա՛տ,
Դու լաց մի՛ լինիր, ես շատ եմ լացել...**

**Կարավանն անցավ, բարձած արցունքով,
Սեւ անապատում ծունկ չոքեց, մնաց,
Այն մեր աշխարհի դարդ ու զուլումն է,
Դու լաց մի՛ լինիր, ես շատ եմ լացել:**

Յուլունք եմ շարել, կապել օրոցքիդ,

9 Ա. Ահարոնյանի չափածո բանաստեղծության 3-րդ տան սկզբնատողն է, որը ժողովուրդը երգում է իբրև առաջին տուն, այդ իսկ պատճառով ժողովրդական միջավայրում ողջ ստեղծագործությունը հայտնի է նաև այս վերնագրով:

10 Տե՛ս **Ահարոնյան Ա.**, Արցունքի հովիտը, Բագու, 1907, էջ 8: Գրքի էլեկտրոնային հղումը՝ <http://haygirk.nla.am/cgi-bin/koha/opac-detail.pl?biblionumber=23461&fbclid=IwAR28yFahZiL--D8dzfO8k8zf2M7FmRfZsaPqUabCjJScHQAyOmyaXTam9U> (մուտք 5.11.2020):

**Չար աչքերի դեմ, մեր չար դուշմունի,
Քնիր ու աճիր, շուտ արա, բալիկ
Դու լաց մի՛ լինիր, ես շատ եմ լացել:**

**Դալուկ շրթունքիդ իմ կաթը սառեց,
Գիտեմ, այն դառն է, չես ուզում, բալիկ,
Ա՛խ, վշտիս թույնն է քամուել նրա մեջ,
Կուրծքս ցավոտ է, ես շատ եմ լացել:**

**Կաթիս հետ մեկտեղ սեւ վիշտս ծծիր,
Հոգուդ մեջ թող նա սեւ վրեժ դառնայ,
Ծլիր, բոյ քաշիր, բոյիդ ես դուրբան,
Եվ լաց մի՛ լինիր, ես շատ եմ լացել:**

Ա. Ահարոնյանի դրամայի մաս կազմող այս հինգ տներից միայն «Քարավանն անցավ» և «Կույր կռունկները» սկզբնատողերով քառյակներն են, որ ժողովուրդը երգել է, այն էլ՝ որոշ տարբերություններով.

**Կույր կռունկները սուգ ու շիվանով,
Այս մեր երկնքով եկան, անց կացան,
Ա՛խ, մեր աշխարհում նրանք կուրացան,
Դու լաց մի՛ լինիր, ես շատ եմ լացել:**

**Քարավանն անցավ, բարձած արցունքով,
Սև անապատում ծունկ չոքեց հոգնած,
Ա՛խ, մեր աշխարհի դարդ ու զուլումով,
Դու լաց մի՛ լինիր, ես շատ եմ լացել:**

2. «Նազելի օրոր». հեղինակայի՞ն, թե՞ ժողովրդական

20-րդ դարում հայ ժողովրդական երաժշտության ականավոր նվիրյալ Հայրիկ Մուրադյանի կատարմամբ վերը նշված քառաքային երգի տարբերակը չափազանց սիրվել ու տարածվել է: Այն նաև համացանցում ունի բազմաթիվ արձագանքներ՝ նորագույն կատարումներ, ինչպես նաև կոմպոզիտորական մշակումներ: ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ժողովրդական երաժշտության բաժնի՝ Ա. Քոչարյանի անվան հարուստ ձայնադարանում փնտրեցինք այդ երգի ավանդական, առանց դաշնամուրի նվագակցության ձայնագրություն և երաժշտագետ Մատթեոս Մուրադյանի ֆոնդում գտանք ոչ միայն մեր փնտրածը, այլ նաև քուշարյանական տարբերակի՝ 20-րդ դա-

րասկզբի Հայրիկ Մուրադյանի կատարումը: Բանասացը քաղաքային երգի այդ տարբերակը վերագրում է Վասպուրականի տարածաշրջանին, իսկ մեզ համար նոր բացահայտված, անտիպ, սակայն ժամանակագրորեն և կերտվածքով ակնհայտորեն ավելի հին տարբերակը՝ Մուրմալուի: Վերջին իր մեղեդու ծավալմամբ ու բնույթով ավելի մոտ է գեղջկական ճյուղին:

Եվ ահա ունենք միննույն երգի երկու տարածաշրջանային տարբերակ, որոնցից մեզանում քիչ հայտնի՝ Մուրմալու գավառին վերագրվողը, փաստորեն, մեզ իբրև հնչող նյութ հասել է տարբեր բանահավաքների ձայնագրությամբ, տարբեր բանասացների կատարմամբ, որոնք արվել են շուրջ 40 տարի տարբերությամբ: Մրանք փաստեր են, որոնք կամբողջացնեն մեր կողմից առաջ քաշվող այն վարկածի ճշմարտացիությունը, որ «Նազեի օրորը» իր խորքում ժողովրդական ավանդական ստեղծագործություն է:

Մեր փնտրտուքները օրոր ասողի՝ Նազեի՝ իրական կերպար լինելու հավանական վարկածի առնչությամբ հանգեցրին որոշակի արդյունքի: Իտալական¹¹ մի կայքում գտանք տեղեկություններ Ա. Ահարոնյանի կյանքի ու գործունեության, ինչպես նաև մեզ հետաքրքրող բանաստեղծության ստեղծման պատմության մասին: Այսպես՝ կայքում նշվում է, որ այն քաղաքական բարդ իրավիճակի արտացոլանքն է, վերագրվում է 1894–1896 թվականների հայկական ջարդերի շրջանին, և, որ մեզ համար ամենաէականն է, Ահարոնյանը, որ Մուրմալուից¹² էր, այն լսել է այդ ջարդերից երեխայի հետ մազապուրծ եղած Նազե անունով մի կնոջից¹³: Ցավոք, այդ բավական ծանր ժամանակներում երաժիշտ մասնագետների բացակայությամբ պայմանավորված, այսօր չունենք Նազեի երգածի մեղեդին: Սակայն «Նազեի օրոր»-ի քուշնարյանական երգի՝ Ա. Քոչարյանի ֆոնդում պահպանվող ձայնագրությունը, որն արված է Արթիկում բանասաց Սավվի Գալոյանից, և այդ երգի՝ Մուրմալուի տարբերակը՝ Հայրիկ Մուրադյանի կատարմամբ, հավանաբար հենց Նազեի երգածի բանավոր փոխանցումն են, որ հասել է մեզ: Երգի այս տարբերակի ավանդական լինելու մեկ այլ վկայություն ևս բացահայտեցինք պատահականորեն: Մեզ համար նորահայտ այդ հին ձայնագրությունը ցույց տվեցինք Գիտությունների ակադեմիայի արվեստի ինստիտուտի մեր գործընկեր Մարգարիտ Մարգարյանին, ով ասաց, որ մի առիթով, երբ «Նազեի օրոր»-ի հայտնի քաղաքային (Վասպուրականի) տարբերակն էր երգում, մայրը՝ ծնունդով գյումրեցի 96-ամյա Անահիտ Մարանջյանը, հանդիմանել է՝ ասելով, որ սխալ է երգում

11 Իտալական կայքի տեղեկատվությունը կարելի է ընդունել իբրև հավաստի՝ հաշվի առնելով, որ Ա. Ահարոնյանը բազմիցս եղել է Մուրե Ղազար կղզում, կապեր հաստատել Մխիթարյան միաբանության հետ: Ցավոք, սա դեռևս միակ աղբյուրն է, քանի որ պարզեցինք, որ Ա. Ահարոնյանի արխիվը գտնվում է Բոստոնում:

12 Ազգագրական գոտու հիշատակությունն այս դեպքում շատ կարևոր է, քանի որ, ինչպես վերը նշվեց, Հայրիկ Մուրադյանի տարբերակներից քիչ հայտնին վերագրվում է Մուրմալուի տարածաշրջանին, իսկ Քուշնարյանի ձայնագրությունն արվել է Արթիկում, որն աշխարհագրորեն մոտ է Մուրմալու գավառին:

13 Տե՛ս <https://www.antivarsongs.org/canzone.php?id=48827> (մուտք՝ 29.08.2020):

մեղեդին, և անմիջապես երգել է մեզ հայտնի Սուրմալուի տարբերակը, որը սովորել էր ավագ սերնդի իր ազգականներից:

Ստացվում է, որ երգն ի սկզբանե՝ դեռևս 19-րդ դարի վերջերին, Ա. Ահարոնյանը լսել է Սուրմալուում¹⁴ Նազե անունով մի կնոջ կատարմամբ, որի հիման վրա մշակած չափածո հատվածն օգտագործել է «Արցունքի հովիտը» արձակ դրամայի մեջ: Դա էլ իր հերթին, ամենայն հավանականությամբ, տարածվել, սիրվել ու նոր մեղեդիով վերակերտվել է Վասպուրական աշխարհի քաղաքային միջավայրում, իսկ Շիրակում և այլուր շարունակել է շրջանառվել սուրմալուական ավանդական մեղեդիով տարբերակը: Իբրև ասվածի վկայություն՝ ունենք Քր.Քուչարյանի ձայնագրությունը, Մ. Սարգսյանի տարեց մոր երգած տարբերակն ու Հայրիկ Մուրադյանի կատարմամբ «Նազեի օրոր»-ի Սուրմալուի տարբերակը, որը, սակայն, մինչ օրս չէր տարածվել, հետևաբար նաև վերծանվել, հետազոտվել ու հրատարակվել:

Այժմ, հնարավորինս խուսափելով նեղ մասնագիտական վերլուծություններից, ներկայացնենք «Նազեի օրոր»-ի այս երկու՝ Հայրիկ Մուրադյանի կատարմամբ Վասպուրականի (քաղաքային) և Սուրմալուի (գեղջկական) տարբերակները:

3. Վասպուրականի (քաղաքային) տարբերակ

Վասպուրականի տարածաշրջանին վերագրվող, մեծ ժողովրդականություն վայելող տարբերակը քաղաքային ֆոլկլորի տիպիկ նմուշ է: Ավելին՝ երգում ակնհայտ է եվրոպական դասական երաժշտության ազդեցությունը, ինչն էլ թույլ է տալիս եզրակացնել, որ այն ստեղծվել է 20-րդ դարասկզբին: Մյուս կարևոր հանգամանքը, որով հնարավոր է մոտավորապես որոշել երգի ստեղծման ժամանակաշրջանը¹⁵, 1907 թվականին Բաքվում Ա. Ահարոնյանի «Արցունքի հովիտ» դրամայի հրատարակումն է¹⁶, որից հետո արձակ ստեղծագործության չափածո հատվածը սիրվեց, տարածվեց, և ինչ-որ պահի ժողովուրդն այն երաժշտականացրեց: Սա կոմպոզիտորական արվեստի ազդեցությամբ հորինված այն նմուշներից է, որոնցում, չնայած բուն ազգային հենքի բացակայությանը, առկա է հայի տեսակին խիստ բնութագրական ջերմ ու մտերմիկ հոգեվիճակ այնպես, ինչպես «Ծիծեռնակ», «Արաքսի արտասուքը» և «Արի՛, իմ սոխակ» երգերում է, որոնց մեղեդիները, մի շարք երաժշտագետներ

14 Բացի իտալական կայքից՝ մեր ներկայացրած տեղեկությունը հաստատեց նաև գրականագետ, Ա. Ահարոնյանի գրական ժառանգության գիտակ Սերժ Սրապիոնյանը:

15 Հայտնի փաստ է, որ, գրառման բացակայությամբ պայմանավորված, անկախ գեղջկական կամ քաղաքային ճյուղից, հնարավոր չէ որոշել այս կամ այն ավանդական նմուշի ստեղծման հստակ տարեթիվը կամ օրը (բացառություն են պատմական դեպքերն ու դեմքերը հիշատակող երգերը): Սա ոչ անհատական, այլ հավաքական մշակութային երևույթ է, որի գոյության ու փոխանցման միակ ձևը բանավոր ավանդույթն է:

16 Տե՛ս http://greenstone.flib.sci.am/gsdll/collect/hajgirqn/book/arcunqihov_1907.pdf (մուտք 27.08.2020):

րի¹⁷ պնդմամբ, բուն ազգային չեն, այլ ուրիշ ժողովուրդներից են փոխառված և ժամանակի ընթացքում բնականորեն հայացված:

Մեղեդու երաժշտագիտական վերլուծությունից կարող ենք եզրակացնել, որ «Նազեի օրոր» երգի՝ Վասպուրականի տարբերակը հորինված է եվրոպական լադային համակարգի ամենահուղական տարատեսակով՝ հարմունիկ մինորով, դասական երկմաս ձևով՝ A և B:

«Նազեի օրոր»
(Վասպուրականի տարբերակ)

ՍԻՉ տուփ 417, N8
Բանասաց՝ Հայրիկ Մուրադյան
Վերծ.՝ Անի Հակոբյան

Կույր կը - ծունկ - նե - ող սուք ու շի - վա -
նով, Մեր սև եր - կըն - քով ե - կան անց կա -
ցան, Ախ, մեր աշ - խար - հում նը - թանք
կու - թա - ցան, Դու լաց մի լի -
միր, ես շատ եմ լա - ցել: Ախ, մեր
աշ - խար - հում նը - թանք կու - թա -
ցան. Դու լաց մի լի - միր, ես շատ եմ լա - ցել:

Կույր կռունկները սուք ու շիվանով,
Մեր սև երկնքով եկան անց կացան,
Ախ, մեր աշխարհում նրանք կուրացան,
Դու լաց մի լիմիր, ես շատ եմ լացել:

Քարավանն անցավ բարձած արցունքով,
Սև անապատում ծունկ չոքեց հոգնած,
Ախ, մեր աշխարհի դարձը, զուլումն էր,
Դու լաց մի լիմիր, ես շատ եմ լացել:

17 Խնդրի շուրջ դիտարկումներ տես **Շահվերդյան Ա.**, Հայ երաժշտության պատմության ակնարկներ XIX-XX դդ. Եր., 1959, **Քուշնարյան Բ.**, Հայ մոնոդիկ երաժշտության պատմության ու տեսության հարցեր, Եր., 2008:

«Նագեի օրոր»
(Սուրմալուի տարբերակ)

ԱԻՉ տուփ 73, N5
Բանասաց՝ Սալվի Գալոյան, Արթիկ
Վերծ.՝ Անի Հակոբյան

Թա - րա - վանն ան - ցավ բար - ձած ար - ցուն քով,
Սև ա - նա - պա - տում ծունկ չո - քեց, մը - նաց,
Այդ մեր աշ - խարհի դար - դը, զու - լումն էր,
Դու լաց մի լի - միր, ես շատ եմ լա - ցել:

Թարավանն անցավ բարձած արցունքով,
Սև անապատում ծունկ չոքեց, մնաց,
Այդ մեր աշխարհի դարդը, զուլումն էր,
Դու լաց մի լիմիր, ես շատ եմ լացել:

Կույր կռունկները սուք ու շիվանով,
Այս մեր երկնքով եկան անց կացան,
Ախ, մեր լեռների վրա կուրացան,
Դու լաց մի լիմիր, ես շատ եմ լացել:

Անչափ կարևորում ենք նաև երգի գրառման վայրն ու կրողի կատարման որակը, որը, չնայած մոտ 100 տարի առաջ Էդիսոնի ձայնագրիչ սարքի մոմե գլանակներից փոխանցված լինելուն, բավականին տպավորիչ է, ձայնագրվել է Արթիկում բանասաց Սալվի Գալոյանի կատարմամբ, որը, վստահաբար կարող ենք ասել, քաջատեղյակ էր Ալեքսանդրապոլի աշուղական հարուստ մշակույթին: Այդ մասին են վկայում նրա կատարմանը բնորոշ մեղիզմների ընտրությունը և հայ ազգային աշուղական դպրոցին մոտ կատարման մաներան:

Այսպիսով՝ երջանիկ պատահականությամբ մեզ համար բացահայտեցինք սիրված օրորոցայինի նորահայտ, սակայն, ինչպես վերը ներկայացվեց, ավանդական մեղեդիով, այսինքն՝ գեղջկական տարբերակը: Այն, չնայած գեղարվեստական բարձր արժեքին, ցավոք, դուրս էր մնացել շրջանառությունից և, փաստորեն, երբևէ չէր ուսումնասիրվել, հրատարակվել ու կատարվել: Այս նորահայտ նմուշի բացահայտումը, ինչպես նաև իտալական արխիվային

կայքից ստացած տեղեկատվությունը, որ չհերքեց նաև Ա. Ահարոնյանի ստեղծագործության գիտակ, գրականագետ Սերժ Սրապիոնյանը, թույլ տվեցին առաջ քաշել այն վարկածը, որ այս չափազանց սիրված ու տարածված բանաստեղծությունն իրականում ժողովրդական ստեղծագործության արգասիք է¹⁸: Հույս ունենք, որ երգի այս տարբերակը կընդգրկվի նաև ժողովածուներում, կկատարվի համերգասրահներում, կսիրվի ժամանակակից մայրիկի կողմից ու կվերադարձվի հայ մանուկին՝ իբրև բանավոր ավանդ:

Անի Ս. Հակոբյան – երաժշտագետ-ֆոլկլորագետ, ունի շուրջ 10 տպագրված գիտական հոդված, զբաղվում է ավանդական երաժշտության օրորի ժանրով:

Էլեկտրոնային հասցե՝ anifolkmusicologist@gmail.com

Summary

AVETIS AHARONYAN’S “NAZE’S LULLABY” IN FOLK MUSIC

Ani S. Akopyan

Key words – Naze’s lullaby, traditional, widespread, Aharonyan, version, culture bearer, music, folklore, urban, rural.

It is known that the Armenian folk (traditional) song has three main directions: peasant, urban folklore and the art of gusans and ashugs (folk troubadours). These directions, being a product of the Armenian people, at the same time differ from each other in the degree of their tradition, the logic of melodic thinking, the scale of sound, character and other indicators. It is well known that Komitas, the founder of Armenian musical folklore, studied mainly peasant music.

The fact is that the cities built at the crossroads of human civilization, as trade and economic centers, were more “diverse”, multinational in terms of demography, which implies appropriate creativity.

We initially had a goal, at least at this stage, to study lullabies of exclusively peasant origin. Thus, the popular “Naze’s Lullaby” with the author’s text and an obvious urban type of melody, until the revelation of a new peasant version, remained outside the scope of our interests. In the article, based on this new version and other sources, we put forward the thesis, according to which the famous lullaby, popular

18 Հուսանք, որ հետագայում կոնկրետ արխիվային նյութերով մեր վարկածը կստանա իր գիտական հիմնավորումը:

among the people for about 100 years as the author's poem by Avetis Aharonyan, actually has a national origin.

Thus, the importance of our little research is not only the presence of a newly discovered unique version of the peasant song of a popular verse, but also a very interesting hypothesis that the poem is actually not the author's, but an example of traditional folklore. It is also important that with the help of Aharonyan's literary development, this verse was disseminated and musically "rebuilt" in the urban environment, which was often sung around the cradle of an Armenian child for almost a century.

Резюме

«КОЛЫБЕЛЬНАЯ НАЗЕ» АВETИСА АГАРОНЯНА В НАРОДНОМ ПЕСЕННОМ ИСКУССТВЕ

Ани С. Акопян

Ключевые слова - колыбельная Назе, традиционный, распространённый, версия, сказатель, музыка, фольклор, городской, крестьянский.

Известно, что армянская народная традиционная песня имеет несколько направлений: крестьянский фольклор, городской фольклор, а также искусство гусанов и ашуггов (народные трубадуры). Указанные направления, являясь творением армянского народа, в то же время отличаются друг от друга степенью своей традиционности, логикой мелодического мышления, звукорядовой основой, характерными образами, типологическими особенностями стихотворных текстов и другими показателями.

Особенность городского фольклора в том, что города, строящиеся на перекрестке человеческой цивилизации как торговые и экономические центры, были более «разнообразными», многонациональными по демографическому составу, что предполагало соответствующее музыкальное творчество. Известно, что Комитас - основоположник армянской музыкальной фольклористики - занимался изучением преимущественно крестьянской музыки.

Наша изначальная цель - изучение колыбельных исключительно крестьянского происхождения, и с этой точки зрения, бытующая в народе попу-

լյարնայ «**Կոլыбельная Назе**», с авторским текстом и с выраженным городским типом мелодии, выходил за рамки наших интересов. Однако в личном архиве Христофора Кушнарьяна (запись 1927-1929 гг.) нам удалось найти и расшифровать доселе неизвестный вариант песни «**Կոլыбельная Назе**», изучение и анализ которой легли в основу данной статьи. Проведя сравнительный анализ нескольких вариантов данной колыбельной, а также используя имеющиеся у нас под рукой некоторые исторические факты и весомые источники, мы выдвинули тезис, согласно которому, знаменитая колыбельная, в основе которой стихотворение Аветиса Агароняна, в народе бытующая как авторская колыбельная, на самом деле имеет **народное происхождение**.

Таким образом, ценность и важность данного исследования не только в наличии новооткрытой уникальной версии крестьянской песни на популярное стихотворение, но и выдвигании той интересной гипотезы, что «**Կոլыбельная Назе**» в своей основе не авторская песня, а образец традиционного фольклора. Также важно то, что с помощью литературной обработки Агароняна, это стихотворение было распространено и музыкально «перестроено» в городской среде; его часто пели около колыбели армянского ребенка на протяжении почти столетия.

REFERENCES

1. **Aharonyan A.**, Arts'unk'i hovitë, Bagu, 1907, <http://haygirk.nla.am/cgi-bin/koha/opac-detail.pl?biblionumber=23461&fbclid=IwAR28yFahZiL--D8dzfO8k8zf2M7FmRfZsaPqUabCjJSceHQaYOmyaXTam9U> (ebook) (**In Armenian**).
2. **Brutyán M.**, Hay zhoghovrdakan yerazhshtakan steghtsagotsut'yun, Yer., 2004 (**In Armenian**).
3. **K'ushnaryan K'.**, Hay monodik yerazhshtut'yan patmut'yan yev tesut'yan harts'er, Yer., 2008 (**In Armenian**).
4. **Komitas**, Hay geghjuk yerazhshtut'yun, Grakan nshkhark' Komitas vardapeti beghun grch'ën, Mont'réal, 1994 (**In Armenian**).
5. **Komitas**, Yerkeri zhoghovatsu, hat. 10, Yerazhshtakan-azgagrakan zharangut'yun, Hay zhoghovrdakan yerger, girk' B, kazmets', khmbagrets' yev tsanot'agrets' **Ք. Ատ'այան**, khmb. **Ք. Ատ'այան**, G. **Gyodakyan**, Yer., 2000 (**In Armenian**).
6. **Shahverdyan Al.**, Hay yerazhshtut'yan patmut'yan aknarkner XIX-XX dd., Yer., 1959 (**In Armenian**).